


229m2



Հրատարակելի Դրուժիններ Ղրկել 1326 W. Huron St., Chicago, Ill.

ԴԷՊԻ ԳՈՐԾ

Զնգչոյ Վերջ. Միութեան վերջին Պատգ. Ժողովը ընդունեց Նուպարաչէնի մէջ Նոր Զնգուշ անուն թաղ մը շինելու առաջարկը եւ լիազօրութիւն տալ նորընտիր կեդր. Վարչութեան ընդառաջ երթալու ամէն զոհողութեան եւ աշխատանքի՝ իրականացնելու համար այս գործնական եւ ամէն սրտի մօտիկ ծրագիրը:

կեդր. Վարչութեան այս շրջանի առաջին շըր-
շարերականէն իսկ յայտնի կ'ըլլայ, որ պաշտօնա-
կան խօսակցութիւնները սկսած են Հ. Բ. Ը. Միու-
թեան հետ, եւ կարեւոր դումար մը վճարուած է
երբեւ կանխաւճար ու ամէն յոյս կայ որ վերջնա-
կան հասկցողութիւնը դոյանայ ի մօտոյ Չնգչոյ
վերջ. Միութեան եւ Բարեգործականի միջեւ եւ
այսպէս իրագործումի ճամբուն մէջ դրուի մեր հե-
տապնդումը:

Բանակցութիւններու յաջող ելքը ստեղծեց, միայն սկզբնաւորութիւնը պիտի ըլլայ մեր զորհո-
րութիւններուն եւ գործնական հայրենասիրու-
թեան:

Նոյնպէս վերջին Պատգ. ժողովին որոշումով,
Նուպարաշէնի մէջ Նոր Զեպուշ Թաղը կառուցանե-
լու ի նպատակ նուիրատուութիւն մը պիտի բացուի
այս էջերուն մէջ: Այս նուիրատուութեան արգիւն-
քէն կախում պիտի ունենայ գործին յաջողութիւնը
եւ այս նուիրատուութեան յաջողութիւնը պիտի
տայ ապացոյցը թէ ո՛րքան գործնական մտքով
կ'ըմբռնենք ձեռնարկը եւ նպատակը՝ որուն կը
ձգտինք տարիներէ ի վեր:

Չնկշոյ Վերչ. Միութեան առաջադրութիւնը, առ այժմ, Նուպարաշէնի մէջ վեց տուններ կառուցանել է: Նուպարաշէնի շինութիւնը պիտի սկսի ամէնէն ուշ 1931ին՝ Բարեգործականին միջոցաւ: Այս տուներու շինութեանէն յետոյ կարելի ու գիւրին պիտի ըլլայ մեր գաղթականներուն փոխադրութիւնը Միութեան սեփական շէնքերուն մէջ, ապահովելով անոնց ճրի բնակութիւնը, ինչպէս նաեւ նուիրեալ ծառայութիւնը հայրենիքի վերաշինութեան:

Եւ երբեք դժուար չէ ասիկա Սմերիկաբնակ Չնդուչիներու համար: Վեց տուներու շինութեան համար կը պահանջուի 6000 տալարէն քիչ մը աւելի: Չնչին դումար մըն է ասիկա, բազդատամբ մեր հայրենակիցներու նիւթական դերքին, ասիկէ առաջ ցոյց տուած զոհողութեան ուզիլն եւ գործնական հայրենասիրութեան:

Եթէ իւրաքանչիւր Չնդուչի իր պարտքը կատարէ եւ իր կարողութեան չափով մասնակցի չուտով այս սրնակներուն մէջ բացուելիք նուիրատուութեան, կատկած չունինք թէ ձեռնարկը պիտի պսակուի կատարեալ յաջողութեամբ եւ շատ կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին :

Եւ որպէս զի հայրենակիցներ առանց դեղեւումի իրենց մասնակցութիւնը բերեն սկսուելիք հանդանակութեան, ըսենք թէ ոեւէ կասկած գործին եւ գործը վարողներուն մասին, բացարձակ անբարեխղճութիւն պիտի ըլլայ եւ դաւաճանութիւն՝ հանդէպ Միութեան գերագոյն ու նուիրական նպատակին:

Յ՛ն ի դործ, ուրեմն, եւ ի զոհողութիւն...:

ՇԻՏԱԿ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ինքզինքս անձրեւէն պատսպարելու համար, անկիւն մը քաշուած էի, այն օրը երբ Շիքաւոյի սօսայիթի Չնգուշի-ներու դաշտահանդէսը տեղի կ'ունենար:

Քիչ վերջ ծանօթ ձայն մը եկաւ ականջիս. ուշադրութիւնս այդ կողմ դարձուցի եւ տեսայ որ մեր Ամբակունձն է, ձեռքերը դէպի երկինք բարձրացուցած կը դանդաւոր Աստուծոյ, որ լաւ տնօրինութիւն մը ըրած էր այդ օրուան համար:

Արիսողոմ, որ քիչ մը հեռուն կեցած էր, մօտեցաւ Ամբակունձին, բարեկեց եւ ըսաւ.

— Ի՞նչ է Ամբակունձ, բարկացած կ'երեւիս:

ԱՄԲ. — Ի՞նչ պիտի ըլլայ պապամ, հալերնիս չե՞ս տեսնար, ըսօր ուղեցինք որ դաշտահանդէս մը տանք, քիչ մը փարա ժողովներ, ան ալ հաւան ըսպէս է, չիմ գիտեր ի՞մ բախտէս է թէ խեղճերուն, քէշկէօր ըրած չըլլայինք, բոլորներուն ալ խաթրը կոյրեցինք:

ԱՐԻՍ. — Ըստը հըմար մի նեղուիր, ուրիշ օր մը հիմի տըհա ըրէք:

ԱՄԲ. — Աղէկ կ'ըսիս հըմը, շատ մասարիՖ ըրեր ենք, տես, տեղը մնացած միսը մեր վրայ կի մնայ, մեր քէսայէն պիտի տանք, շահը գասապը պիտի ընէ, ես որ դիտնայի թէ ըսպէս պիտի ըլլէր, ըս փարան իմ Մրտօիս կողբրէի. ես ըսի թէ ըսպէսով քիչ մը աւելի կողբրէնք Մրտօիս, չէնը մէկալները իմ հո՞գս են:

ԱՐԻՍ. — Քեզի բան մը ըսի՞մ, արդէն ըս ըրածնիդ սըմասին հոգ չես ընէր:

ԱՄԲ. — Ի՞նչ հոգ պիտի ընեմ, ինոնք շահահաւկիթ կըլմընին, մերը ըսես՝ անդամաւործին մէկն է, ամէն ատեն փարա կ'ուզէ, է՛ պապամ, ես կարնամ հասնիմ:

ԱՐԻՍ. — Քեզի բան մը ըսեմ, արդէն ըս ըրածնիդ սըլխալ է, դուք պէտք է որ բաժնուէիք, չունքի ըսպէսով տըհա դարար կ'ենէք, եւ հատ մ'ալ, հըղի ե՞րբ փարա պիտի ճամբէք. եթէ դուք խելացի ըլլէիք նը, Կեղրոնին հետ մէկ-տեղ կի դործէիք, ձեռք ձեռքի կուտայիք, Հայաստանի մէջ Նոր Չնգուշ մի կի շինէիք, խեղճերն ալ հոն կ'երթային հանգիստ մի կի ապրէին: Բան մի տըհա ըսիմ քեզի Ամբակունձ, որ տըհա շատ խելքիդ պառկի: Մասալա, ըսինք թէ հարիր հատ խեղճ ունինք, մենք ըտոնց ի՞նչ գըլրան փարա պիտի օղբրէնք որ օքտա: Զաթէ ունեցած չունեցածնիս պայլու է, դեռ ըս ամէնը ողբրէլու ըլլինք շատ շատ ամիս մի պիտի օքտա, մէկ ալ գիտես թէ ըս փարան տասը տարուան մէջ ժողոված ենք, եթէ օղբրէնք՝ մէկ ամիս պիտի ապրին. համալ տասը տարի պիտի աշխատինք, չարչարուինք որ ամիս մի եւս պիհենք: Ըսածս օղորթ չէ՞:

ԱՄԲ. — Հաւատա չիտակ ես, բայց թէ ինչ դիտնամ պապամ, մեր մարդիկն ալ պաշխա բան կը գրուցեն. ո՞ր մէկուն հաւատամ:

ԱՐԻՍ. — Ուրիշը շատ բան կ'ըսէ, դուն ալ խելք ունիս, մտածէ: Եթէ ինծի մտիկ կ'ընես, Կեղրոնին հետ դործողներուն հետ կըլլիս. ըսիմ քեզի ես դիտու կի հաւատամ, չունքի գըլուխիդ օր չըլլի՝ վըտքիդ առաջ չի երթար, բայց երբ դուն ալ դիտու հաւատաս, եանիեա՝ Կեղրոնին հետ ըլլիս, ընոնք ամէն բան կի ընեն, հէմ խեղճերուն կ'օգնեն, հէմ Նոր Չընգուշը կի շինեն: Բան մը տըհա ըսիմ. խեղճ որ կի ըսէք ուլե՞ր են. դուն գիտես որ շատ նամակ դրեցիք՝ Մարտէյլ, Պէյրուլթ, Հալէպ, ամէնըն ալ ձեզի դրեցին թէ մենք ձեռ փարան չինք ուղեր, ըկըր մեզի կ'ուզէք օգնել նը, դացէք

Կեղրոնին հետ մէկտեղէք: Արդէն եթէ խեղճ ալ կայ նը, Կեղրոնը կի օղնէ. ալ ըրածնիդ պարապ բան չէ՞, ես ընի մըն չիմ գիտեր, ես դիտու կի հաւատամ, դուն ալ եւ քեզի պէնեղողներն ալ պէտք է ձգէք ըս քանի մը հատերը եւ Կեղրոնին ուժ տաք. ըն ատեն է որ ամէն բան աղէկ պիտի ըլլի թէ մարդուն սրտին խօշ պիտի դայ, թէ Աստուծոյ: Տաց օլ:

Այսպէս վերջացաւ մեր բարեկամներուն խօսակցութիւնը, եւ կարծեմ Արիսողոմի տրամաբանութիւնը ճիշտ էր:

ԶՆԳՈՒՇԻ

ՊԵՏՔ Է ՇԱՀԻՆՔ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ

Միութեան ճրգ. Պատգ. Ժողովը ձեռնհասօրէն քննարկեալ կատարեալ որոշման մը յանդած է Նուպարաչէնի մէջ Նոր Չնգուշ անուն թաղ մը շինելու մասին:

Թերեւս դտնուին մարդիկ որ այդ որոշումը դէպի ետ լուկըրկում մը նկատեն, սակայն շիտակ տրամաբանողներ աւելի գործնական պիտի դտնեն եղած այս ձեւական փոփոխութիւնը, նկատի ունենալով Միութեան նիւթական վիճակը:

Նպատակի տեսակէտէն ունէ փոփոխութիւն չկայ, քան որ բոլոր հայրենակցականներու նպատակին առանցքը կը կազմէ Հայաստանի վերաշինութիւնը եւ Հայ Ժողովուրդին քննամիտութիւնը:

Արարկիրցին իր Նոր Արարկիրով թէ՛ հինը յաւերժացուց եւ թէ իր հայրենակիցները յաւերժ ապահով եւ բարգաւաճ վիճակի մը մէջ գրաւ: Նոյնն է Պարբերդցիին, Մալաթիացիին եւ Սեբաստացիին բաղձանքը:

Վստահ եմ թէ բոլոր հայրենասէր եւ լուրջ մտածող Չնգուշիներու բաղձանքն ալ այս է: Եթէ Չնգուշ իր առանձին գիւղով չի կրնար յաւերժանալ, Նոր Չնգուշ թաղ Նուպարաչէնի մէջ՝ նոյն նպատակին պիտի ծառայէ, կը բաւէ որ Չնգուշին իր հայրենի երգիքներուն տակ ապաստան գտնէ:

Եթէ Արարկիրցին առաջնութիւնը շահեցաւ նոր գիւղի շինողներուն մէջ, Չնգուշին ալ պէտք է Նուպարաչէնի մէջ Նոր թաղ մը ունենալու առաջնութիւնը շահի եւ այսպէս թերեւս դրդիւ մը արթնցնէ միւս փոքր հայրենակցականներուն մէջ, որպէս զի անոնք ալ ունենան իրենց նոր թաղերը եւ այսպէս ազատ քաղաքացիներու հաւաքականութեամբ մը ուղեւորայ ազգը եւ չէնայ Հայաստանը:

Այո, պէտք է շահինք առաջնութիւնը այս ձեռնարկի մէջ: Սնարհաւորութիւն չէ ասիկա, այլ անկեղծ փառասիրութիւն, եւ կը յուսանք որ Վեր. Միութեան Կեղր. Վարչութիւնը Պատգ. Ժողովի այս գեղեցիկ եւ գործնական որոշումը պիտի իրականացնէ, եւ մեր հայրենակիցները աւելի բուռն եռանդով պիտի փարին դործին:

ԾՕՎԱՌԻ

ՆՈՒՆԻՐ «ԾՕՎԱՌ»Ի

Ֆրէզնոյի դաշտահանդէսէն դոյալած

\$100-22

ՎՐԻՊԱԿ. — Սան Ֆրանչիսկոյի նուէրը 22 տոլար 20 սէնթ է, եւ թէ 20 տոլար 20 սէնթ, ինչպէս հրատարակուած էր «ԾՕՎԱՌ»ի անցեալ թիւով:

ՀՈՒՐԵՐ ՊԵՅՐՈՒԹԻՆ

Պէյրուքի հայ եւ օտար հաստատութիւններու ամա-
լերէի հանդէսներէն երկուքին մասին կ'ուզեմ քանի մը տե-
ղեկութիւններ տալ, քանզի այս երկուքին մէջ Չնդուչիներ
իրենց պատուաւոր տեղը ունեցան յանձին իրենց վերապրող
բաժնուղջ եւ մտացի դաւակներուն:

1. Հայ-Ամերիկեան Աղջկանց Վարժարան. — Այս վար-
ժարանէն ընթացաւարտ օրիորդներ մէկ կամ առաւելագոյն
երկու տարիէն կրնան աւարտել Աղջկանց Ամերիկեան Գոլէ-
էր: Իպրոցը բացուած է Ատանայի Ամերիկեան միտնարու-
թենէն եւ կը գտնուէր Միս Ուէյլի տնօրինութեան տակ, սա-
կայն այս վերջին երկու տարիները կը գտնուէր Միս Շէյնի
տնօրինութեան տակ եւ դարձած է քաղաքիս տիպար աղջը-
կանց վարժարանը: Կը ցաւինք, որ յաջորդ տարի Միս Շէյն
պիտի հեռանայ: Պէյրուքահայութիւնը եւ այս վարժարանը
մեծ կորուստ մը պիտի ունենան:

Վարժարանը ունեցաւ իր 12 ընթացաւարտները, որոնց-
մէ երեքը պատուով աւարտեցին: Այս վերջիններէն մին էր
որդացեալ մեծանուն Բրօֆ. Յովհաննէս Պուճիզանեանի
կրտսեր դուստրը՝ Օր. Անահիտ, որու վիճակուեցաւ կար-
գալ ուղերձ մը:

Օր. Անահիտ իսկական արժանիքը ցոյց տուաւ իր հօր
աղջիկը կոչուելու: Բեմին վրայ, երբ համեստ, ամօթխած,
այլ համարձակ չեղտերով արտասանեց իր ուղերձը, յու-
ղածով լեցուց իր հօր ծանօթներն ու աշակերտները, մանա-
ւանդ որ ետեւը բեմին վրայ նստած էր Մր. Բիկզ: Ինչհէր
անցան ասոնց արտերէն, ոչ ոք կրցաւ չափել, բայց շատեր
զգացին:

Օր. Անահիտի յաջողութեան համար կը շնորհաւորենք
Ամերիկայեան իր ազգականներն ու հայրենակիցները եւ կը
աղթենք, որ պատեհութիւն ստեղծուի բարձրագոյն կըր-
թութեան հետեւելու:

2. Լիբանանեան Պետական Երաժշտանոց (Գօնէրվա-
րաւաւ). — Վերջին տարիներուն բացուած երաժշտական
գլորոց մըն է, որ իր ցոյց տուած յաջողութեան համար պե-
տութիւնը պաշտօնապէս յորջորջեց Պետական Գօնէրվա-
րաւաւ:

Այս գլորոցին մէջ, խիստ չնչին վճարովով ձայնական,
տեսական եւ գործիական երաժշտութիւն կ'ուսուցուի:

Անցեալ տարիներուն նման, այս տարի ալ գլորոցը ու-
նեցաւ իր դաշնակի մրցումները եւ մրցանակաբաշխութիւնը:
Ամերիկեան համալսարանի Գօնէրվաթուառէն քննիչ-
ներ որոշած էին աշակերտներու աստիճանները:

Այս գլորոցէն մրցանակ տնտղներուն մէջ ալ Չնդուչը
ունեցաւ իր ներկայացուցիչը: Բրօֆ. Յովհաննէս Պուճի-
զանեանի կրտսեր որդին փոքրիկ Գարեգինը՝ հակառակ որ
միայն այս տարի հետեւած էր ջութակի դասերուն, կրցած
էր շահիլ երկրորդ տեղը: Առաջնութիւնը խլած էր օրիորդ
մը, որ վեցէ աւելի տարիներ նոյն գլորոցին դասաւանդու-
թիւններուն հետեւած է:

Ահա գերդաստան մը՝ Պուճիզանեանը՝ որ անցեալին ու
ներկայիս փառքը կը կալմէ Չնդուչի՝ կարգ մը այլ գեր-
դաստաններու հետ եւ որ սակայն այսօր մոռցուած է:

Լաւ կ'ըլլայ որ Չնդուչիական միութիւն եւ Պուճիզանե-
ան գերդաստան մօտենան իրարու: Ասով երկուստեք պիտի
կրնան օգտակար հանդիսանալ եւ օգտուիլ:

ԲԱՐԵԿԱՄ ՄԸ

Պէյրուք, Յուլիս 17, 1929

ՉՆԴՈՑ ՎԵՐՇ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՅՐԷՉՆՈՅԻ ՄԱՍՆԱՃԻԿԻՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԻՍԸ

Յուլիս 28-ին տեղի ունեցաւ Յրէզնոյի մասնաճիւղին
դաշտահանդէսը, աւելի քան 200 հայրենակիցներու ներկա-
յութեան: Սան Յրանչիսկոյէն եկած էին Մ. Փափաճեան,
Կ. Տէր Ստեփանեան, Ճան Պապանեան, Ճան Գօնտօեան եւ Ա-
ւետիս Փիլոեան:

Յանձնախումբին պատրաստութիւնը կատարեալ էր,
կէսօրուան ճաշին համար հինգ ոչխարներ խորովուած էին՝
երկրի տվորութեան համաձայն: Երկու հարիւրէ աւելի հայ-
րենակիցներու ներկայութիւնը, այս ճոխ սեղանին շուրջ,
ինքնին կատարեալ ապացոյց մըն էր Չնդուչիներու հայ-
րենասիրութեան:

Ճաշի միջոցին մասնաճիւղի ատենապետ Պրն. Մելքոն
Փապուճեան քանի մը ուրախալից խօսքեր ընելով, ներկա-
ներուն բարի դալուստ մաղթեց եւ երգելու հրաւիրեց Ճան
Գօնտօեանը, որու քաղցր երգէն յետոյ խօսելու առիթ աը-
րուեցաւ Պրն. Մ. Փիլոեանի, որ գեղեցիկօրէն պարգեց Մի-
ութեան նպատակը ու հրաւիրեց ներկաները որպէս զի ան-
վերապահ կերպով անդամագրուին Միութեան:

Ճաշէն յետոյ սկսաւ Կէնճեան եղբայրներու նուագը:
Պրն. Ասլան Սըրըմեան իր թաշկինակը պարզելով յայտարար-
եց ներկաներու, թէ այսօր 100 տոլար կ'ուզէ «Ծօլաւ»ին
համար եւ նոյնքան ու աւելի դուժար մըն ալ վերաշինացին:
Առաջին պարտղը Պրն. Մ. Փափաճեան դոյսցուց 50 տոլար,
հինգական տոլար նուիրեցին Ս. Էրմոյեան, Կ. Տէր Ստե-
փանեան, սգաւոր Տիկին Աղանի Տաղտիկեան, խիլ ուրիշ
հայրենակիցներ մասնակցեցան 3, 2 եւ 1 տոլարով:

Պրն. Մ. Փափաճեանի կէս ժամ տեւող պարէն յետոյ,
կէս ժամ մըն ալ արուեցաւ Յրէտի Խ. Սըրըմեանի եւ Օր.
Չեփիւռ Չաօ Ս. Սըրըմեանի, որոնց պարի միջոցին նուէր-
ներ ըրին 10 տոլար Խ. Ս. Սըրըմեան, 10 տոլար Թորոս Տօ-
րուղեան՝ իր եղբորորդոյն Նիկողոսի ձեռամբ, 5 տոլար Գ.
Տաղտիկեան: Մէկ ժամուան մէջ «Ծօլաւ»ին համար դոյս-
ցաւ 109.25 տոլար, որմէ յետոյ նուէրներ եղան ի նպաստ
վերաշինացի, ուրկէ դոյսցաւ կոկիկ գոմար մը:

Բոլոր հայրենակիցներու ըրած զոհողութիւնը պնահա-
տելի էր: Ուրախութիւնը տեսեց մինչեւ իրիկուան ուշ ա-
տեն: Սան Յրանչիսկոյէն եկողներ մեկնեցան զոհ տուաւո-
րութեամբ:

Կարգադիր յանձնախումբը իր շնորհակալութիւնը կը
յայտնէ այն ամէն հայրենակիցներուն, որ սիրայօժար օգ-
նեցին եւ դաշտահանդէսը յաջողութիւն մը դարձուցին:

ՃԱՆ ԱՇՏԱՐԱԿԵԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Պրն. Թուխման Պապանեանի «Հայրենիք»ի մէջ հրատա-
րակած գրութեան ի պատասխան՝ շատ մը յօդուածներ ստա-
ցած ենք բազմաթիւ հայրենակիցներէ: Նկատելով որ Կեղ-
րոնական Վարչութիւնը պիտի ընէ խնդրոյն յարմարագոյն
տնօրինութիւնը, եւ բաւ համարելով նախորդ թիւով մեր
տուած պատասխանը, կը փափաքենք յայտնել թէ պիտի
չկրնանք հրատարակել այդ խնդրոյն շուրջ մեզի դրուած
գրութիւնները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՐՏԻՐՈՍ Խ. ՓԱՓԱՅԵԱՆ

Պրն. Մարտիրոս Խ. Փափաճեան իր նիւթական զոհողութիւններով մեծապէս սատարեց Ֆրէզնոյի զաշտահանդէսին յաջողութեան եւ խանդավառ տրամադրութիւն ստեղծեց: Ան միշտ ալ երբ առիթը ներկայացած է, ցոյց տուած է իր անկեղծ հայրենասիրութիւնը եւ նուիրումը պորժին: Պրն. Փափաճեան իր զուարթ բնաւորութեամբ եւ ընկերսիրութեամբ սիրուած է բոլոր զինքը ճանչցողներէն: Կը մաղթենք որ միշտ ալ իր այդ բարձր գիրքին վրայ մնայ:

ՃԱՆ

ԶԵԳՈՒՇՅԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՄԱՐՍԷՑԻ.— Պրն. Խ. Գուլուճեան ընտանեօք Պէյրութէն քաղաքս ժամանց, Միջագային Սր. Գրոց Ընկերութեան Հայոց բաժնին կողմէ, քարոզչութեան պաշտօնով: Մեր հայրենակցին բարի գալուստ մաղթելով՝ կը յուսանք որ Զեգուշի վերջ. Միութիւնը եւ Մարտիրոսեան Զընդուցիներս մեծապէս պիտի օգտուինք իր ներկայութենէն:

*** Մէկ տարին աւելի էր որ մեր համակրելի հայրենակցին՝ Պրն. Փոլ Նիզամեանի ներկայութիւնը կը վայելէինք: Ան քաղցր բնաւորութեան տէր անձնաւորութիւն մը՝ կ'այցելէր բոլոր հայրենակիցներու եւ կերպով մը մխիթարութիւն կ'ըլլար ամէնքին ալ:

Մեզ համար կորուստ մը սլիտի ըլլայ իրմէ բաժնուիլը եւ մեծ ցաւ մը՝ իր սէրէն եւ դուրսդրանքէն զրկուիլը:

*** Հայրենակցուհի Օր. Մարգարիտ Զաղրմանեան իր եղբոր կարգադրութեամբ Ամերիկա մեկնեցաւ: Բարի ճանապարհ կը մաղթենք:

ՊԵՏՐՈՍ ՏԱՂՈՒՆԵԱՆ

ՖԻՆԶԵՆՕ.— Յուլիս 10ին Զաղօ Ս. Սըրբմանի ամուսնութեան 10րդ տարեդարձն ըլլալով, բոլոր Սըրբմանները, Տիկնոջ կողմի ազգականներն ու կնքահայրը ինքնաշարժով այցելեցին Սէլմա եւ շնորհաւորելով Տէր եւ Տիկին Զաղօ Ս. Սըրբմանը՝ ուրախ ժամանց մը վայելեցին:

ԼՐԱՏՈՒ

ՇԻՔԱԿՕ.— Տէր եւ Տիկին Կ. Եայլաեան մանչ դուստի մը ունեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Տէր եւ Տիկ. Կ. Վահանեան տրձակուրդով Լօրէնս եւ այլ քաղաքներ պտոյտի մեկնեցան: Բարի ճանապարհ եւ յաջող դարձ կը մաղթենք:

*** Տէր եւ Տիկ. Պ. Եայլաեան տրձակուրդի առիթով Հէյվուսի մեկնեցան: Բարի ճանապարհ եւ յաջող դարձ կը մաղթենք:

*** Տիկնայք Աղնաւորեան եւ Զուլճեան վերադարձան իրենց արձակուրդէն: Բարի գալուստ կը մաղթենք:

*** Պրն. Կ. Եղոյեան Լօրէնսէն քաղաքս ժամանեց: Բարի գալուստ կը մաղթենք:

*** Տէր եւ Տիկ. Պ. Աղնաւորեանի փոքրիկը կողորդի դորձողութեան Ենթարկուեցաւ: այժմ քիչ մը տկար է. կատարեալ ապաքինում կը մաղթենք:

*** Պրն. Խաչատուր Թէլլոյեանի Տիկինը հիւանդանոցէն ելած է եւ օդափութութեան համար քաղաքէս դուրս կը մնայ: Կատարեալ ապաքինում կը մաղթենք:

ԼՕՐԷՆՍ.— Տէր եւ Տիկ. Պետրոս Աղնաւորեան մանչ դուստի մը ունեցան: Տէր եւ Տիկ. Պետրոս Գաղանճեան աղջիկ թոռնիկ մը ունեցան: Տէր եւ Տիկին Թուխման Նիկողոսեան աղջիկ դուստի մը ունեցան: Մեր շնորհաւորութիւնները կը յայտնենք բոլորին ալ:

*** Պոսթոնէն Տիկին Մարգարիտ Կոստանեան քաղաքս այցելեց եւ մէկ շաբաթ տեսակցութիւններ ունեցաւ բոլոր ազգականներու եւ բարեկամներու հետ: Կրկին վերադարձաւ իր տեղը: Բարի երթ կը մաղթենք:

*** Նոյնպէս Տիկին Զարուհի Պահարոյեան քանի մը օր քաղաքս մնալով Պոսթոն վերադարձաւ: Բարի ճանապարհ:

*** Շիքակոյէն քաղաքս ժամանեցին Տէր եւ Տիկին Կ. Գալաեան: Կը հերասիրուին Տէր եւ Տիկին Մ. Գրիգորեանի կողմէ: Բարի գալուստ կը մաղթենք:

*** Տէր եւ Տիկին Ա. Ոսկերիչեան եւ Օր. Սառա Կոկիչեան, որ վերջերս Նիւ Եորքի կողմերը վաղանախ դացած էին, քաղաքս վերադարձան: Բարի գալուստ կը մաղթենք:

*** Քաջածանօթ Գիմաթ Մաման երկու շաբաթ է որ քաղաքէս Պոսթոն մեկնած է: Բարի վայելում եւ շուտ վերադարձ կը մաղթենք:

Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՊՈՍՏՈՆ.— Շիքակոյէն Պոսթոն այցելեց հայրենակից Պրն. Պետրոս Եայլաեան՝ իր աղնի Տիկնոջ, զօքանչին, քննիին եւ դուստներուն հետ միասին: Պրն. Եայլաեան կը ճամբորդէ ինքնաշարժով: Այս առթիւ ալ ցելեց «Պայքար» խմբագրատունը եւ սիրալիւր տեսակցութիւն մը ունեցաւ մեզի հետ:

*** Լօրէնսի մեր հայրենակիցներէն Պրն. Աւետիս Էղըմանեան, հարեւր մեկնելու առիթով այցելեց «Պայքար» խմբագրատունը եւ վերջին սիրալիւր տեսակցութիւնը ունեցաւ մեզի հետ: Պրն. Էղըմանեան թերեւս առաջին Զեգուշցին է որ Հայաստան կը մեկնի: Մենք ի սրտէս բարի ճանապարհ կը մաղթենք հայրենակարօտ հայրենակիցին եւ կը բարձանք ու կը յուսանք որ ի մօտոյ շատ մը հայրենակիցներ պիտի հանդիպեն իր շաւիղներուն՝ զէսի Հայրենիք:

Պ. Փ.

